

կը վարժեցրնէ զիրենք վայլած բաներնին իբրև իրենցը համարելու . ասանկով վարժութիւնը կը համոզէ զիրենք որ բնական իրաւունք մը ունին իրենց բարեկամներուն կամացը վրայ : Ա՛ռ զեն իբրև իշխանութեամբ կառավարել զանոնք . երբոր այս պահանջմունքները փոփոխակի են , ինչպէս որ շատ անգամ կը տեսնենք , անձնասիրութիւնը կը զրդուաւի ու երկու կողմերէն ալ կը խօսի , դաւնութիւն , պաղութիւն ու ծանր կշտամբանքներ , և այն , կը պատճառէ :

Դանկով երբեմն փոփոխակի իրարութրայ այնպիսի պակասութիւններ կը գտնեն , զորոնք առաջ կը ծածկէին . կամ այնպիսի կիրքերու մէջ կ'իյնան , որոնք ալ զգուելի կ'ընեն իրենց զբարեկամութիւնը , ինչպէս որ սասարիկ հիւանդութիւնները զգուելի կ'ընեն ամենէն աւելի քաղցր զուարձութիւնները :

Այսպէս ամենէն աւելի յարմար չեն հաստատուն բարեկամութեան մը անոնք , որ ամէն բանի մէջ ծայրը կ'անցնին : Դարեկամութիւնը ըլլար մէկու մը վրայ անանկ վառվառուն ու անանկ ամուր , ինչպէս երկչոտ ու լուրջ բնաւորութեամբ մարդկանց մէջ , որոնց ըզգաստ հոգին կը ճանչնայ զառաքինութիւնը . որովհետեւ բարեկամութիւնը կը սփոփէ անոնց՝ գաղտնեաց ծանրութենէն ու լուռթենէն Ճնշուած սրտերը , կը լայնէ կ'ընդարձակէ անոնց միտքը , զանոնք աւելի վստահացող ու աւելի աշխայժ կ'ընէ , անոնց ծածուկ ըզգասանացը , զործողութիւններուն ու զուարձութիւններուն հետ կը խառնուի . և բոլոր անոնց կենաց հոգին կ'ըլլայ :

Երիտասարդներն ալ նմանապէս սաստիկ զգայուն ու իրենք զիրենք վստահացող են . բայց իրենց վստավուն կիրքերը կը վերացընէ զիրենք ու փոփոխամիտ կ'ընէ : Ո գայունութիւնն ու վստահութիւնը սովորական են ծերոց մէջ . բայց հարկը զիրենք իրարու կը մօտեցընէ , ու բանն է անոնց իրարու հետ ունեցած կապը : Դաջիններուն

սէրը աւելի փափուկ է . իսկ վերջիններուն սէրը աւելի հաստատուն է :

Դարեկամութեան պարտքը այնչափ ընդարձակ է , որչափ որ չկարծուիր . մենք մեր բարեկամին թշուառութիւններուն մէջ իրեն ետևէն կ'երթանք , բայց իր տկարութիւններուն մէջ կը լքանենք զինքը . ասով մենք քան զինքը աւելի տկար կ'ըլլանք :

Ով որ կ'ուզել ջածածկել այնպիսի բարեկամներ ունենալը , որոնց թերութիւնները խոստովանելու բռնադատուած է , իր նուաստութիւը կը ցուցընէ : Ոյնէ որ ազատ ես դուն այս ախտերէն , ուրեմն յայտնէ զքեզ համարձակ բերնով . տարածէ քու պաշտպանութիւնդ թշուառաց պակասութիւններուն վրայ . ասանկ ընելով՝ որ և իցէ կերպով մը զքեզ վտանգի մէջ չես դներ , բայց մեծ ու վեհ մարդիկները միայն կրնան իրենք զիրենք ասանկ ցուցընել : Տկարները իրար զիրար կ'ուրանան , վատութեամբ կը զինէն զիրենք հասարակաց դատմունքներուն , որոնք շատ անգամ անիրաւ են , չեն կրնար կերպով մը դէմկենալ անոնց :

#### ՎՕՎՆԱՐԿ

#### ԱՌԱԿ

Ագուաւն և Զոգի իւր:

Ագուաւն ժողովեաց զձագս իւր , և նրատեաց զնոսա՝ ասելով . Որդեակը իմ , մի լուիք . պատրաստք եղերուք՝ ի մարդկանէ , ևս առաւելի յայի ժամն՝ որ խոնարհն ՚ի քար առնելն : Եւ ասեն ձագքն նորա . Ո՛վ մայր մեր , զինչ արս սցուք թէ յառաջագոյն մարդն առեալ լինի զքար ՚ի ձեռն իւր : Ասէ մայրն . Այժմ գիտացի որ աւրելոց էք դուք :

ՎԵ ԴԵՅ